

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՂԱՍԵՂ ՌԻԶԱ ՀՈՋԱԹ ՇԱՄԱՄԻ

ՏԵՔՍՏԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԶԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժ. 01. 04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ ՎԻԳԵՆԻ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԱՎԵՏԻՍՅԱՆ ԶԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ**

բանասիրական գիտությունների թեկնածու

**ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ**

Առաջատար կազմակերպություն՝

**Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 25-ին՝ ժամը 16<sup>30</sup>-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:  
Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

**ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է տեքստի և թարգմանչի անհատական մեկնաբանության խնդիրների ուսումնասիրությանը: Այնտեղ դիտարկվել են ոչ միայն տեքստային-լեզվական հարցեր՝ կապված թարգմանական արվեստի հետ, այլև շոշափվել են պատմամշակութային տարբեր համակարգերի, տեղեկատվության ներքին բնույթի, ազգային յուրահատկությունների և հարակից այլ խնդիրներ: Մասնավորապես տարբեր լեզուներից ու մշակույթներից համեմատվել է թարգմանական պատկառելի նյութ (ասույթներ, դարձվածքներ...) պարսկերեն համարժեքների հիման վրա:

Աշխատության էական հարցադրումներից են եղել թարգմանչի և հմուտ թարգմանության խնդիրները, որոնք հիմնականում կատարվել են Վիլյամ Շեքսպիրի սոնետների պարսկերեն թարգմանությունների գուգահեռներով: Այնուհետև լեզվական կոնկրետ օրինակներով ցույց են տրվել անգլերեն ասույթների ճշգրիտ թարգմանությունների բարդություններն ու դժվարությունները՝ կապված դրանց բառացի թարգմանության խիստ անբավարարության և թարգմանչի ստեղծագործական լրջմիտ աշխատանքի հետ, որի շնորհիվ թարգմանվող բնագիրը ոչ միայն պահպանում է իր խմաստը, այլև գեղարվեստական հմայքն ու արժեքը: Ի հավելում այս ամենի՝ շեշտադրվել է ելակետային լեզվում տեղ գտած ձևաբանական և շարահյուսական մակարդակների, պատկերավորման զանազան արտահայտչամիջոցների (չափազանցություն, հեզնանք, մեյուսիս...) և ընդհանրապես ոճական նրբությունների քաջիմացության անհրաժեշտությունը:

Ատենախոսության մեջ դիտարկվել է նաև հաջող թարգմանության գլխավոր ու էական պայմանը՝ զանազան տեքստերի բնագրերը, որոնց արդյունավետ թարգմանության համար անհրաժեշտ են լայն գիտելիքներ՝ ձեռք բերված նախքան թարգմանության գործին անցնելը: Հմուտ թարգմանիչը պետք է կատարելապես տիրապետի թե՛ բնագրին և թե՛ թարգմանվելիք լեզուներին այն աստիճան, որ ի վիճակի լինի հասկանալու ոճական նրբություններն ու տարբերություններն այդ լեզուներում:

Աշխատանքում զանց չի առնվել նաև տեղեկատվության հոսքի՝ սոցիալական, գրական-մշակութային, քաղաքական, տնտեսական այլևայլ անխուսափելի փոփոխություններ առաջ բերելու հետևանքով թարգմանության մեջ գաղափարախոսության դերի մեծացման հանգամանքի քննությունը, հանգամանք, երբ շարունակաբար ներմուծվող գիտելիքներն ստեղծում են ճանաչողական անհամաձայնություններ, և առաջանում է դինամիկ լարվածությունը մեղմելու խնդիր՝ հենված գաղափարախոսության ու ավանդույթի փոխազդեցության վրա:

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի **արդիականությունն** ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ եթե թարգմանությունն ինքնին կարելի է բնորոշել իբրև տեքստի յուրօրինակ մեկնաբանության միջոց, ոչ միայն պարզ փոխադրություն մի լեզվից մյուսին, ապա այն ստեղծագործական լուրջ գործընթաց է, ուր իր կարևոր տեղն ունի թարգմանչի անհատականությունը: Եվ դա վերաբերում է բոլոր ժամանակներին ու խիստ արդիական է նաև այսօր:

Գիտության ու տեխնիկայի մեր դարում նորանոր հայտնագործություններն ու գիտելիքներն օրեօր ողողում են աշխարհը: Սակայն դրանք սովորաբար գրվում են անգլերենով, և հարկ է լինում այդ տեղեկությունները թարգմանել այլ լեզուների, որպեսզի բնագրի լեզվին չտիրապետող մարդիկ նույնպես ձեռք բերեն անհրաժեշտ գիտելիքներ, քայլեն աշխարհին համընթաց և լինեն տեղեկացված: Գիտական հայտնագործություններն արդյունավետորեն վերարտադրելու համար զգացվում է տարբեր լեզուներով հմուտ թարգմանիչների կարիք, ինչից և բխում է թեմայի արդիականությունը: Այստեղից էլ խնդրո առարկայի կարևորությունը, այն է՝ տեքստն ու թարգմանչի անհատական մեկնաբանությունը ինչպես կարող են անդրադառնալ թարգմանված նյութի որակի վրա: Այդ ընթացքում դիտարկվում են իրարամերժ մոտեցումներ, ուստի թեմայի ուսումնասիրությունը պահանջում է պատշաճ և բազմակողմանի վերլուծություն:

Ուշագրավ է, որ գիտելիքներն ու սոցիալական փոփոխությունները ձևավորվում են հենց թարգմանության միջոցով, որը միջմշակության գիտելիքների, հավատալիքների ու արժեքների փոխանցման կենտրոնական գործողությունն է, ինչպես նաև իրականության ու մշակույթների վերարտադրության միջնորդը: Այն պատասխանատու է նաև բազմաթիվ աղավաղումների, անորոշությունների ու անհաջողությունների համար: Մեր գիտելիքների մի զգալի մասն այսօր ձեռք է բերվում հեռուստատեսության միջոցով, իսկ վարքագծի մեր մոդելները, արժեքները, սկզբունքներն ու ձգտումները ձևավորվում են լրատվության կողմից, որը ոչ միայն տեղեկացում է աշխարհի մասին, այլ նաև որոշակի պատկերացումներ ամրագրում իրականության բազմազանության վերաբերյալ: Իսկ ի՞նչ դեր ունի թարգմանությունը տեղեկատվության այդ հարահոսի մեջ: Պատասխանը մեկն է՝ կենտրոնական. գրեթե այն ամենը, ինչ լրատվությունը հասցնում է մեզ աշխարհի մյուս ծայրերից, թարգմանվում է: Առանց թարգմանության գործընթացի հետ կապված բարդությունները հասկանալու իրականության մասին մեր պատկերացումները կձևավորվեն այն ուժերի ցանկությամբ, որոնք իրենց ձևով են ներկայացնում իրականությունը: Հենց այս ամենով է պայմանավորված սույն աշխատության **գործնական նշանակությունը**:

Այսօր դասավանդողներից և ուսանողներից ոմանք հստակ չեն գիտակցում թարգմանության կարևորությունը: Ինչպես նշում է Ռիազին, «թարգմանության արվեստի դասավանդման մեջ ներառված մարդիկ թե՛ ուսուցիչները, թե՛ ուսանողները, պետք է տեղեկացված լինեն թարգմանության կարևորության մասին, քանի որ դա գիտական մի հսկայական ճյուղ է, որը տարբեր ազգերի միջև փոխըմբռնման գրավականն է, համաշխարհային ասպարեզում հաղորդակցման բանալին, ինչով և պայմանավորված է հմուտ թարգմանիչների անհրաժեշտությունը»<sup>1</sup>: Եվ ահա սույն ատենախոսությունը կարող է օգտակար լինել տեքստի և թարգմանչի անհատական մեկնաբանության հիմնախնդիրն ուսումնասիրող հետագա մասնագետների համար, դառնալ հայեցակարգ, որը կզարգացնի թարգմանության արվեստն ուսումնասիրողների տեսական գիտելիքները: Բացի այդ՝ այն գործնական նշանակություն կարող է ունենալ ոչ միայն թարգմանիչների, ուսանողների, այլև ընդհանրապես գրականության և թարգմանության տեսությամբ զբաղվողների համար:

<sup>1</sup> **Riazi M &Razmjoo L.** Developing Some Guidelines for a Change in the Program of English Translation in Iranian Universities, Journal of Social Sciences & Humanities of Shiraz University. Vol. 21, NO1. 2004. p. 28.

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության **առարկան** տեքստի և թարգմանչի անհատական մեկնաբանության հիմնախնդրի հանգամանակից ուսումնասիրությունն է, մասնավորապես անգլերեն ասույթների, դարձվածքների և շեքսպիրյան սոնետների պարսկերեն թարգմանության ընթացքում թարգմանչական խնդիրների բացահայտումը, նաև ելակետային ու նպատակային լեզուների լիակատար իմացության անհրաժեշտության քննությունը:

Հետազոտության **նպատակն** է վերլուծել ամենատարբեր լեզվաշերտեր պարունակող գրական զանազան ժանրատեսակի երկեր՝ բացահայտելու համար անգլերենում և պարսկերենում դրանց քերականական և լեզվառձական առանձնահատկությունների, փոխկապակցվածության, աղերսների ու անխուսափելի տարբերությունների խնդիրները:

Ատենախոսությունը ներառում է հետևյալ հինգ **խնդիրները**.

1. Վերլուծել մի շարք ասույթներ ու դարձվածքներ, քանի որ դրանք առանձնահատուկ դեր են խաղում լեզվի բառապաշարային համակարգում և արտացոլում են յուրաքանչյուր ժողովրդի լեզվամտածողության ու մշակութային հատկանիշները՝ ներառյալ նյութական և հոգևոր արժեքները:

2. Օգնել անգլերեն ուսումնասիրող պարսիկ ուսանողներին՝ է՛լ ավելի իրագել լինելու անգլերեն ու պարսկերեն ասույթների և դարձվածքների խորքային իմաստներին, հասկանալու, թե ինչպես կիրառել այդ գիտելիքներն ըստ անհրաժեշտության ու ինքնատիպ եղանակով:

3. Բանաստեղծական երկը թարգմանելիս հետևել որոշակի կանոնների. ստեղծագործության գաղափարն արտահայտելու համար ճշտել տաղաչափական սկզբունքներն ու հանգավորման եղանակները:

4. Հեղինակի կողմից իրադարձությունների նկարագրությունը համեմատել համանման վիճակների ներկայացմանը գրական այլ գործերում:

5. Բացահայտել հեղինակի վերաբերմունքը ենթադրյալ ընթերցողի հանդեպ. արդյո՞ք նա օգնու՞մ է ընթերցողին, թե՞ խոչընդոտում:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության **գիտական նորույթն** այն է, որ իրանական գրականագիտության մեջ առաջին անգամ նման ծավալով և նորովի են վերլուծվում տեքստի թարգմանության և թարգմանչի անհատական մոտեցման հիմնախնդիրները: Այս տեսակետից աշխատանքը կարող է ոչ միայն խթանել ընդհանրապես թարգմանական արվեստի զարգացումը, այլև շահեկան լինել հատկապես Իրանի Իսլամական Հանրապետության համալսարանների անգլերենի ֆակուլտետներում անգլերենից պարսկերեն թարգմանությունների պարտադիր համարվող ուսումնական ծրագրերի համար, որոնք միշտ չէ, որ ծառայում են իրենց բուն նպատակին. դրանք կա՛մ ճիշտ չեն դասավանդվում, կա՛մ էլ դժվարըմբռնելի են, հատկապես, երբ խոսքը վերաբերում է Վ. Շեքսպիրի սոնետներին: Եվ ահա հետազոտության մեջ քննարկելով Իրանի Իսլամական Հանրապետության համալսարաններում թարգմանության դասավանդման ներկա անմխիթար իրավիճակի խնդիրը՝ փորձել ենք փաստարկել, թե համալսարաններում ինչու և ինչպես սովորել

թարգմանական արվեստի հմտությունները, մատնանշել ենք ուսուցման ուժեղ և թույլ կողմերը, թարգմանության դասավանդումը դիտարկել ենք որպես անհրաժեշտ ուսուցման գործընթաց և այլն:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Աշխատանքը կատարված է գրականության և թարգմանության տեսության ուսումնասիրման ժամանակակից մեթոդներով ու սկզբունքներով: Այն շարադրված է համեմատական, պատմաքննական և համադրական մեթոդներով՝ փորձելով քննել ուսումնասիրվող նյութի հիմնական դրսևորումները, խորքային առնչությունները:

Սույն հետազոտության արդյունքները ձեռք են բերվել հարցազրույցների միջոցով, ինչպես նաև թարգմանչական դասընթացների սեփական դիտարկումների շնորհիվ, որ անցկացվել են Մաշհադի՝ Ֆիրդուսիի համալսարանում, Իմամ Ռեզայի անվան համալսարանում, ինչպես նաև Սպահանի՝ Շեյխ Բահայիի համալսարանում:

### **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են Հայաստանի Հանրապետության և արտերկրի գիտական հանդեսներում ու ժողովածուներում տպագրված 5 հոդվածներում: Ուսումնասիրությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականության տեսության բաժնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը:

### **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

#### **ՏԱՐԲԵՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՑԹՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՄՊԵԿՏՆԵՐ (ԱՆԳԼԻՍԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Առաջին գլխում տարբեր լեզուներից ու մշակույթներից անգլերեն առածների ու դարձվածքների պարսկերեն թարգմանությունների հիման վրա դիտարկվում են թարգմանության հետ կապված որոշ առանձնահատկություններ: Ըստ անհրաժեշտության

ներկայացվում են լեզվի ծագումը, թարգմանությունն ու նրա պատմությունը, թարգմանության դասավանդումը:

Սույն գլխում բազմակողմանի ներկայացված է թարգմանությունը՝ որպես գիտություն, որն անհրաժեշտ տեղեկություն է պարունակում: Թարգմանությունը մի լեզվի համապատասխան նյութի փոխակերպում է այդ նույն նյութի ճշգրիտ ու հասկանալի տարբերակին մեկ այլ լեզվով: Երբեմն թարգմանիչը հարկադրված է լինում իրեն որոշակի ազատություն թույլ տալ բնագիր տեքստը փոխակերպելիս, որպեսզի կարողանա փոխանցել բնագրի տրամադրությունն ու ոճը:

Թարգմանչության կարևոր հասկացություններից է համարժեքությունը: Թարգմանության տեսության և պրակտիկայի մեջ գոյություն ունի համարժեքության երկակի, իսկ ավելի կոնկրետ՝ լայն և նեղ ըմբռնում: Որոշ լեզվաբաններ համարժեքների թվին են դասում բնագրի բառի կամ բառակապակցության յուրաքանչյուր համապատասխանություն թարգմանող լեզվում՝ տվյալ կոնկրետ կոնտեքստում: Թարգմանչության հաջորդ կարևոր հասկացությունն տարբերականությունը կամ տարբերակային համապատասխանությունների հասկացությունը: Թարգմանության ընթացքում կարևոր դեր է խաղում նաև կոնտեքստը<sup>2</sup>:

Ինչպես ամեն մի գիտություն, թարգմանչությունն էլ ունի իր առարկան և տեսությունը: Թարգմանության տեսությունը բնորոշվում է որպես «երկլեզվյան հաղորդակցության գիտականորեն հիմնավորված կադապար»: Գոյություն ունեն թարգմանչության ընդհանուր և մասնավոր տեսություններ: Ընդհանուր տեսության ուսումնասիրության առարկան թարգմանական ընդհանրություններն են, թարգմանության այն խնդիրներն ու երևույթները, որոնք ընդհանուր են բոլոր լեզուների համար, մինչդեռ թարգմանության մասնավոր տեսությունը վերաբերում է լեզուների որոշակի զույգի, որոշակի ժանրի կամ էլ գործառական ոճի տեքստերի թարգմանությանը: Չնայած առավելապես 20-րդ դարավերջում թարգմանության ձեռք բերած ակնհայտ հաջողություններին՝ նրա շատ խնդիրներ դեռևս չեն լուծվել և մինչ օրս վիճելի են<sup>3</sup>:

Նման խնդիրներից է նույնականության հասկացությունը, որը թարգմանության տեսության հիմնարար, գլխավոր հասկացությունն է: «Նույնականություն» եզրույթը գործածվում է մի շարք գիտակարգերում: Թարգմանության տեսության մեջ այն սահմանվում է որպես թարգմանության տեքստի ճշգրիտ համապատասխանություն ելակետային տեքստին, ինչը ենթադրում է նրանց լիակատար համընկնումն իմաստային, գործառական-ոճական և գործաբանական հայեցակերպերը: Նույնականացումը թարգմանության հիմնախնդիրն է, բայց սա չի նշանակում, որ այն հիմնարար խնդիր չէ նաև թարգմանչական պրակտիկայում: Արդարև, թարգմանչության բոլոր մշակված և մշակվող մեթոդները, եղանակներն ու հնարքներն այսպես թե այնպես միտված են թարգմանության նույնականությունն ապահովելուն<sup>4</sup>:

Այսպիսով, թարգմանվածքը բնագրի տարբերակ է և ոչ թե նոր ստեղծագործություն: Ուստի իմաստային կառուցվածքը կարող ենք բաժանել 3 բաղադրիչների՝

<sup>2</sup> Տե՛ս **Gentzler E.** Contemporary Translation Theories. London and New York. Rutledge. 1993. P. 101.

<sup>3</sup> Տե՛ս **Schramm Wilbur.** Information Theory and Mass Communication. New York. Holt. 1966. P. 320.

<sup>4</sup> Տե՛ս **Cook Walter A.** Case Grammar as a Deep Structure in Tagmemic Analysis. Washington DC. Georgetown University. 1971. P. 93.

1. Իմաստային կառուցվածքի անվանողական կառուցվածքը (նումինատիվ): Մա տեքստի ընթացքի տեսանկյունն է, որը կարող է գուրկ լինել արտաքին աշխարհի հետ համապատասխանությունից, քանի որ հեղինակային երևակայության արդյունքում ծնված էություն է:

2. Իմաստային կառուցվածքի մոդուսային բաղադրիչ, որն ունի իրողության հուզական կամ նպատակային մեկնաբանություն: Մա սովորաբար տեքստի մտահղացման հիմքն է, մինչդեռ անվանողական բաղադրիչն ստեղծվում է միայն պատկերման նպատակով:

3. Իմաստային կառուցվածքի գործարանական բաղադրիչ, որը տեքստի ներգործական և ազդեցիկ ուժն են՝ ուղղված են կոնկրետ հասցեատիրոջը<sup>5</sup>:

Թարգմանությունը գուտ բառերի փոխարինումը չէ մեկ այլ լեզվի նույն բառերով: Այն ներառում է մշակույթների, քաղաքականության, գեղագիտության և շատ այլ գործոնների համապատասխանեցում երկու լեզվամտածողությունների միջև: Մա հատկապես վերաբերում է դարձվածքների, ասույթների, ինչպես նաև այն նախադասությունների թարգմանությանը, որոնք բնավ չպետք է բառացի ընկալել: Նույնիսկ եթե այդ ասացվածքի կամ արտահայտության բոլոր բառերն առանձին-առանձին հասկանալի են մեզ, մենք միգուցե չմտնենք դրա իմաստը մշակույթին ծանոթ չլինելու պատճառով: Ուստի կարելի է ասել, որ դարձվածքներն ու ասույթները ոչ միայն լեզվաբանական գործընթացների արդյունք են, այլև սովորական հասարակության մեջ արդյունավետ հաղորդակցության արգասիք:

Լեզու ուսուցանել կամ սովորել նշանակում է ուսուցանել կամ սովորել նոր մշակույթ: Այս երկու տարրերը չեն կարող տարանջատվել: Ասույթներ ու դարձվածքներ սովորեցնելով՝ անգլերենի մասնագետները կարող են օգնել սովորողներին ոգևորությամբ ու հետաքրքրությամբ թափանցելու անգլիական մշակույթի մեջ: Իսկ անգլերեն սովորողները, որ հաճախ պայքարում են իրենց բառապաշարն ընդարձակելու համար, հեշտությամբ են հիշում այդ ասույթներն ու դարձվածքները և ուրախությամբ են օգտագործում դրանք: Դարձվածքներն ու ասացվածքներն սովորելը կարող է օգնել մարդկանց՝ հեշտությամբ հիշելու դրանց մեջ կիրառված կառույցներն ու բառերը: Ասում են, որ բառեր սովորելը հեշտ գործ չէ, և անգլերենի դարձվածքները բացառությունն չեն կազմում, նույնիսկ ավելի դժվար են, քանի որ դարձվածքներում բառերի հերթականությունը խիստ կապակցված է թե՛ կառուցվածքի, թե՛ իմաստի առումով: Լեզու սովորողները հաճախ դժվարանում են հասկանալ, որ գործ ունեն դարձվածքի հետ, և հետևաբար հեշտությամբ են շփոթվում՝ չհասկանալով դարձվածքի ներդաշնակությունը համատեքստի հետ: Դարձվածքներն ու ասույթները յուրաքանչյուր լեզվի ու մշակույթի անբաժանելի մասն են: Լեզուն ունի միայն իրեն բնորոշ նմանատիպ կամ տարբեր գաղափարներ կենսական բազմաթիվ այնպիսի բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են, օրինակ, մարդկային արժեքները, մտածելակերպերը, վարքի չափանիշները, կրոնական հավատալիքները, ավանդույթներն ու սովորույթները, հասարակական կարծիքը և այլն: Լեզվի բառային համակարգը ձևավորվում է բառերի ու արտահայտությունների, այդ թվում՝ նաև ասույթների ու դարձվածքների միջոցով:

<sup>5</sup> Տե՛ս Searle John R. Papers in Discourse. Summer Institute of Linguistics Publications in linguistics and Related Fields. Dallas. University of Texas at Arlington.1969. P . 228.



Առաջին գլխում ասույթների ու դարձվածքների մասին խոսելիս հանգում ենք այն եզրկացության, որ դարձվածքներն այնպիսի արտահայտություններ ու նախադասություններ են, որ չեն նշանակում այն, ինչ արտահայտում են: Նույնիսկ եթե յուրաքանչյուր բառի իմաստը հասկանալի է, հնարավոր է չհասկանալ դարձվածքը, քանի որ չես հասկանում տվյալ մշակույթը: Ասացվածքները իմաստուն խոսքեր են, որ որևէ բան են սովորեցնում: Ասույթներն ու դարձվածքները ոչ միայն լեզվի արդյունք են, այլև հասարակության մեջ արդյունավետ հաղորդակցական միջավայրի առկայության: Անգլերեն և պարսկերեն ասույթներն ու դարձվածքներն արտացոլում են երկու երկրների ամենատարբեր հատկանիշները: Մշակութային տեսանկյունից պարսկերեն ասացվածքներն ու դարձվածքները հիմնականում ունեն ագրարային ծագում ունեն. նրանցում հաճախ են հիշատակվում ծառերը, գետերը, բերքը, բրինձը, ջուրը և այլն: Անգլերեն դարձվածքներում ու ասույթներում, սակայն, ավելի վառ են արտացոլված վաչկատուն կյանքի առանձնահատկություններ:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

### **ԹԱՐԳՄԱՆԻՉԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՂԻՐՆԵՐԸ (ՇԵՔՍՊԻՐԻ ՍՈՆԵՏՆԵՐԻ ՊԱՐՄԿԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Երկրորդ գլխում բնորոշվում է թարգմանության տեսությունը՝ հիմնված թարգմանության գործընթացի և ընթացակարգի վրա: Այնտեղ նաև բնութագրվում են իսկական թարգմանիչն ու թարգմանչական արվեստի խնդիրները Վ. Շեքսպիրի սոնետների պարսկերեն թարգմանության հիման վրա:

Երբ խոսում ենք թարգմանության պատմության մասին, ապա պետք է հիշատակվեն այն տեսությունները, որոնք ի հայտ են եկել դրա զարգացման տարբեր ժամանակաշրջաններում: Ըստ էության յուրաքանչյուր դարաշրջան թարգմանության պատմության մեջ բնութագրվում է առկա հատուկ փոփոխություններով, որոնք, սակայն, տարբերվում են ըստ տեղանքի: Օրինակ՝ թարգմանության զարգացումն Արևմուտքում նույնը չէ, ինչ արաբական աշխարհում: Այդ դեպքում ի՞նչ է իրենից ներկայացնում լեզվի ծագումը: Հարցը կարող է բաժանվել երկու մասի, որոնցից յուրաքանչյուրը վերջին տարիներին գիտական քննարկումներում տեղիք է տվել տարբեր կարծիքների: Մենք կարող ենք դրանք անվանել բարդ ինքնատիպ հատված և քիչ ավելի բարդ (սակայն ոչ հեշտ) նախապատմական հատված<sup>6</sup>:

Խնդրի առաջին՝ բարդ հատվածը վերաբերում է նրան, ինչն անձամբ դիտարկել ենք մենք՝ որպես կարևոր հատված. ոչ-լեզվից լեզվի առաջացման ժամանակահատվածից այն պահը, լինի դա ներկա ժամանակում թե ոչ, ինչը, նույնպես մեր կարծիքով, ոչ-մարդկային էակներից մարդկային էակների ծագման ժամանակահատվածն է: Երկրորդ ավելի հեշտ հատվածը վերաբերում է այդ լեզվի ծագման և մեր իմացած լեզվի ձևավորման միջև ընկած փուլերին: Այս հատվածը վերջին երկու տարիների ընթացքում մի շարք խնդիրներ է առաջացրել: Արդյունքում մեր պատկերացումները դարձել են

<sup>6</sup> Տե՛ս **Austin K. L.** How to Do Things with word. By K. Olrmon. Oxford University Press. 1962. P . 21.

շատ ավելի ճշգրիտ է դարձել: Սակայն խնդրի բարդ մասում, որին մենք փորձել ենք դասել լեզվի ծագումը, դրա հատուկ շարժառիթը և լեզվի ու մարդկության ծագման պատճառը, առկա է որոշակի լռություն, ինչը խառնաշփոթ է առաջացնում գրողի մարդաբանական ինտուիցիայի և իմաստաբանական հղկվածության շուրջ<sup>7</sup>: Սա յուրօրինակ առաջընթացի ձև է: Միայն միամիտներն ու ընդդիմադիրներն են շարունակում թերագնահատել հարցի կարևորությունը, ինչպես որ սովորաբար արվում էր մեկ դար առաջ՝ առաջ քաշելով այն հանգամանքը, որ մարդկային լեզուն առաջացել է երկար ժամանակ առաջ՝ առաջնային հաղորդակցական համակարգերի երկարատև զարգացման ընթացքում: Քանի որ մեր պատկերացումները նորարական այն միջոցների մասին, որոնցով ծավալվում է լեզուն, դառնում են ավելի ճշգրիտ ու համապատասխանաբար դրանց արմատական տարբերությունը կենդանիների հաղորդակցության բոլոր միջոցներից արժանանում է իր գնահատականին, ապա այն աղբյուրը, որում գտնվում է հրաշալի այն պահը, երբ սկսել է առաջանալ լեզուն, հեղինակներից ոմանք անվանում են խորհրդավոր: Գիտնականը, ում որոշումն այս հանելուկի շուրջ բավականին նման է լեզվի ծագման մեջ առաջադրված որոշմանը, թերևս կանգ է առնում մինչև ծագման այն միակ տեսարանին հասնելը, որն առաջադրված է նմանակման ցանկության տեսության հիմնական վարկածի հիման վրա: Հիմնական վարկածը մարդկային լեզվի ծագման ճշմարտության հետ բախման փորձն է: Լեզուն, ինչպիսին որ մենք այն ճանաչում ենք, ավելի շատ նշանների և ոչ թե ազդանշանների լեզու է: Այն ներկայացնում է ոչ թե կենդանական հաղորդակցության աստիճանական զարգացում, այլ դրա արմատական բեկումը<sup>8</sup>:

Երկրորդ գլխում մանրագնին բացատրվում է նաև, որ թարգմանությունը, եթե ընդհանուր ասենք, բնագրի լեզվի (ԲԼ) տեքստը փոխակերպում է թարգմանվելիք լեզվի (ԹԼ) ճշգրիտ և հասկանալի տարբերակին՝ առանց կորցնելու բնագրի իմաստը, տրամադրությունը, ոճը: Սա հատկապես դժվար է չափածո՝ բանաստեղծական խոսքի թարգմանության ժամանակ, քանի որ այդ դեպքում անհրաժեշտ է պահպանել հանգը, պատկերավոր լեզուն և բնագրի ընդհանուր տրամադրությունը: Իսկ դա կլինի անհնար, եթե թարգմանիչը զուրկ է հատուկ տաղանդից և եռանդագին չի աշխատում իր որակը բարելավելու ուղղությամբ: Բանաստեղծությունների որոշ թարգմանություններ այնքան խորն են և այնքան մոտ բնագրին, որ խոր սպավորություն են թողնում մեկ ուրիշ լեզվով խոսող ընթերցողների վրա: Չափածո խոսքի թարգմանության հետ կապված դժվարությունների պատճառով շատերը հանգել են այն մտքին, որ բանաստեղծությունների թարգմանիչը ևս պետք է բանաստեղծ լինի, հակառակ դեպքում՝ իրավունք չունի անգամ սկսելու այդ գործը:

Այս գլխում հանգամանալից խոսվում է շեքսպիրյան սոնետների թարգմանության մասին: *Սոնետ* բառը ծագում է իտալերեն *sonetto*-ից, որը նշանակում է կարճ երգ: Սոնետը 14 տողից բաղկացած բանաստեղծություն է, որն ունի յամբական հնգաչափի և հանգավորման հաստատուն ձև: Ավանդաբար սոնետները դասակարգվում են ըստ

<sup>7</sup> Տե՛ս **Heelan**P. Space-Perception and the Philosophy of Science. Berkeley. University of California. 1983. P. 31.

<sup>8</sup>Տե՛ս **Stennes Leslie Herman**. The Identification of Participants in Adamawa Fulani.Hartford. Seminary Foundation.1969.P . 24.

հանգային կառույցների: Վիլյամ Շեքսպիրի սոնետների հանգային կառույցն է՝ abab, cdcd, efef, gg: Այս հանգերով գրված սոնետները կոչվում են շեքսպիրյան սոնետներ: Գոյություն ունեն նաև պետրարկյան և պենսերյան սոնետներ, որոնք հիմնված են Ֆրանչեսկո Պետրարկայի և Էդմունդ Սպենսերի հանգային կառույցների վրա: Սովորաբար սոնետները պարունակում են վոլտա կամ շեղում: Մա մի նուրբ հնարք է, որի նպատակն է շեղել ընթերցողի ուշադրությունը յամբական հնգաչափի միապաղաղ ռիթմից: Հնարավոր է, որ մեքենա վարելիս դու մի փոքր շեղվես աջ կամ ձախ, հնարավոր է նաև շեղվես 180 աստիճան: Նույնն է պարագան վոլտայի դեպքում. դու կարող ես մի փոքր շեղվել, կարող ես և լրիվ փոխել ուղղությունը: Եվ ահա բանաստեղծները տարբեր հնարքներ են գործի դրել՝ տարբեր տեղերում շեղվելու համար: Ուշագրավ է, որ շեքսպիրյան սոնետներում վոլտան սովորաբար հայտնվում ութերորդ տողից հետո:

Առաջին ութ տողերի՝ օկտավի հանգային կառույցն է՝ abba abba: Բսկ վերջին վեց տողերը՝ սեկստետը, կարող են փոփոխական հանգային կառույց ունենալ: Վոլտան կամ սոնետի շեղումը սեկստետի սկիզբն է: Սեկստետը հաճախ դիտվում է որպես օկտավում առաջ քաշված խնդրի լուծում: Շեքսպիրյան սոնետները գրված են հնգոտնյա յամբի հանգով, որը նշանակում է, որ յուրաքանչյուր տողում առկա է տասը վանկ: Յուրաքանչյուր տողի ռիթմը պետք է լինի այսպիսին՝ մեղմ-ԲԱՐՁՐ- մեղմ-ԲԱՐՁՐ- մեղմ-ԲԱՐՁՐ-մեղմ-ԲԱՐՁՐ: Բոլոր սոնետներն ունեն տասնչորս տող: Շեքսպիրյան սոնետների հանգերը այսպիսին են. վերջին սոնետների մեծամասնությունն ունի վոլտա կամ շեղում: Շեքսպիրյան սոնետներում վոլտան սովորաբար սկսվում է 9-րդ տողից: Թեպետ ավանդական սոնետը բաղկացած է յամբական հնգաչափի 14 տողից, 20-րդ դարից մինչև մեր օրերն ապրող շատ գրողներ խախտել են սոնետի ավանդական ձևը՝ մեղմելով ավանդական սոնետի պահանջներից մի քանիսը:

Վ. Շեքսպիրն ակներևաբար իր սոնետները չի գրել այն միտումով, որ մեծ շեշտ դնի գրական միջոցների վրա: Նրա սոնետների առաջին խմբագիրները գրեթե ուշադրություն չեն դարձրել այդ միջոցների վրա (բացառությամբ պատկերավոր խոսքի և ակնարկի՝ ալլուզիա): Մակայն պոստմոդեռնիստական գրական տեսության և ուշադիր ընթերցանության շրջանում մեծ նշանակություն էր տրվում սոնետների կառուցվածքին ու վեյլուծությանը և բնականաբար Վ. Շեքսպիրի կողմից գործածված պատկերավորման արտահայտչամիջոցներին՝ (ալիտերացիա, ասոնանս, անտիթեզ, անալոգիա, հակադրություն, փոխանցում (enjambment), փոխանունություն, սինեկդոխա, օբյաումորն, անձնավորումը, ներքին հանգ...): Ժամանակակից քննադատությունը ևս հաճախ մեծ շեշտադրումներ է կատարում սեռական բնույթի բառախաղերի և կրկնակի ծագումների վրա, որ տեղ են գտել անգլիացի հանճարեղ գրողի սոնետներում (արյան որդը և այլն):

Վ. Շեքսպիրի հանդեպ հետաքրքրությունը Բրիտանիայի սահմաններից դուրս այնքան մեծ էր, և այս հարցի շուրջ գիտական գործերն այնքան շատ, որ առաջին հայացքից կարող է թվալ, թե անիմաստ է նորից խոսել մի թեմայից, որն այդքան շատ է ծամ-ծմված: Մակայն սույն հետազոտությունը, որը հարցականի տակ է դնում Վ. Շեքսպիրի գործերի բեմականացումը Իրանում պատմական երկու խոշոր ժամանակահատվածներում և փորձում է շեքսպիրյան ստեղծագործությունների բեմականացումը ներկայացնել իբրև մշակութային շարժ, փաստացի նոր տեսանկյունից է մտնում թեմային և օգնում է ընթերցողին՝ հասկանալու, թե արևմտյան թատրոնն ինչու է տասնամյակներ

շարունակ այդքան մեծ դեր խաղացել Իրանի քաղաքական և սոցիալական կյանքի բարելավման գործում:

Ատենախոսության երկրորդ գլխում եզրակացվում է, որ պոեզիան, բոլոր հնարավոր բաղադրիչները ունենալով հանդերձ, կասկածներ ու հարցեր է հարուցում, թե արդյոք այն հնարավոր է թարգմանել: Չափածո խոսքի թարգմանությունը դյուրին չէ թերևս այն պատճառով, որ դժվար է համատեղել հնչողությունն ու իմաստը և դա արտահայտել մեկ մտքով: Այս կարծիքը բխում է այն փաստից, որ յուրաքանչյուր լեզու ունի իրեն բնորոշ բանաստեղծական չափ ու երաժշտականություն: Ոմանք գուցե նույնիսկ մտածեն, որ բանաստեղծությունը պետք է թարգմանվի արձակի տեսքով, քանի որ արձակը ևս ունի բանաստեղծական հնչողություն: Այս առումով հայտնվել են տարբեր, երբեմն իրարամերժ կարծիքներ: Բանաստեղծական խոսքի թարգմանության խրթին գործը շատերին մղել է եզրակացնելու, որ չափածո խոսքի թարգմանիչն ինքը պետք է բանաստեղծ լինի, հակառակ դեպքում՝ նա չպետք է համարձակվի իր գլխից բարձր ցատկել՝ փորձելով թարգմանել բանաստեղծությունը: Փորձեր են արվել նաև թարգմանելու բանաստեղծությունը ռիթմիկ արձակի տեսքով: Եվ, ի վերջո, բանաստեղծությունը կարող է թարգմանվել նրանց կողմից, ովքեր, մյուս լեզվի կատարյալ իմացությունից զատ, խորապես հետաքրքրված են պոեզիայով և օժտված են բանաստեղծական զգացողությամբ: Այս առումով բանաստեղծը գլխավոր թարգմանիչն է:

## **ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

### **ՁԵՎ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ, ՓՈՒՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ)**

Ատենախոսության վերջին՝ երրորդ գլխում ներկայացվում են թարգմանության տեսակները, քերականական ու բառագիտական առանձնահատկությունների փոխանցումը, լեզվի իմաստաբանական կառուցվածքը, հաղորդակցման իրավիճակը, ակնարկվող իմաստը, իմաստի տեսակները, կապը բառագիտական առարկաների ու տարբեր տեսակի բառերի միջև: Այս գլխում բնորոշվում և քննարկվում են ձևն ու իմաստը: Այնուհետև փորձ է արվում լեզվական կոնկրետ օրինակներով ցույց տալ անզլերեն ասույթների ճշգրիտ թարգմանությունների բարդություններն ու դժվարությունները, երբեմն՝ ներհակությունները՝ կապված դրանց բառացի թարգմանության անբավարարության և թարգմանիչի ստեղծագործական լրջմիտ աշխատանքի հետ, ինչի շնորհիվ թարգմանվող բնագիրը ոչ միայն պահպանում է իր իմաստը, այլև գեղարվեստական հմայքն ու արժեքը: Այստեղ շեշտադրվում է նաև ելակետային լեզվում տեղ գտած ձևաբանական և շարահյուսական մակարդակների, պատկերավորման զանազան արտահայտչամիջոցների (չափազանցություն, հեզնանք, մեյոսիս...) և ընդհանրապես ոճական նրբությունների քաջիմացության անհրաժեշտությունը:

Նկատելի է, որ թարգմանությունը կարող է կատարել մի շարք տարբեր դերեր, օրինակ, ստեղծել նոր բառեր: Սակայն ամենակարևոր դերն այն է, որ թարգմանությունն օտար, ավելի քիչ հայտնի մշակույթների մասին գիտելիքներ ձեռք բերելու աղբյուր է: Ասել է թե՛ թարգմանությունը զուտ բառագիտական գործընթաց չէ, այլ կարող է ունենալ

նան քաղաքական և սոցիալական մեծ նշանակություն, ինչպես որ դա եղել է ատենախոսության մեջ նշված երկրներում: Ավելին, թարգմանությունն օժտված է միջմշակութային բացառիկ գործառույթով. կարող է կամուրջ դառնալ աշխարհի ամենատարբեր մշակույթների միջև՝ բացելով անհայտ քաղաքակրթություններ և լեզվամշակույթների դռներ:

Հավելենք, որ թարգմանությունը կարող է ունենալ մի շարք տարբեր դերակատարումներ նոր բառեր կազմելու հարցում, սակայն, որ, ամենակարևորն է, օտար, ավելի քիչ հայտնի մշակույթների վերաբերյալ գիտելիքների դուռ բանալ: Հետևապես թարգմանությունը լոկ լեզվաբանական գործընթաց չէ. այն կարող է ունենալ նաև քաղաքական ու սոցիալական ազդեցություն ամենատարբեր երկրների պարագայում: Ավելին, թարգմանությունը հնարավորություն է տալիս նաև խորամուխ լինելու թարգմանչաց աշխարհի մեջ: Թարգմանչական մեթոդաբանությունն անչափ կարևոր դերակատարում կունենա արագ զարգացող այս աշխարհում, ինչպես նաև կնպաստի կրթության զարգացմանը: Թարգմանությունների կարող ենք հանդիպել գրեթե ամենուրեք՝ գրքերում, զանազան պարբերականներում և այլն: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ թարգմանչի դերն անչափ կարևոր է. նա պետք է չափազանց հստակ հասկանա բնագիր լեզուն, որպեսզի կարողանա ճշգրիտ թարգմանություն կատարել, նյութը, օտար հեղինակի մտքերը պետք է այնպես թարգմանի, հասցնի ընթերցողներին, որ մատչելի լինի նաև սուկ իր մայրենի լեզուն իմացողներին: Ավելին, երբ թարգմանիչը որոշակի մշակույթի կամ քաղաքակրթության վերաբերյալ է թարգմանում, նա պետք է բավականաչափ իրազեկ լինի այդ ամենից: Ուստի նա պետք է լավ իմանա լեզուներ կրողների մշակույթը, խորամուխ լինի երկրագիտության մեջ, որպեսզի իր թարգմանությունը ճշգրիտ լինի: Թարգմանիչը պետք է իմանա, թե ինչ թարգմանչական մեթոդներ պետք է կիրառի, որպեսզի համարժեք թարգմանություն ստանա, և ինչպես կարող է փոխանցել բնագային լեզվի իմաստը:

## Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Ց ՈՒ Ն Ն Ե Ր

1. Թարգմանության ոլորտում, որն Արևմուտքում ունի շատ երկար ու հարուստ պատմություն, կատարվել են բազմաթիվ հետազոտություններ, որոնք առաջ են բերել տարբեր, երբեմն իրարամերժ կարծիքներ: Յուրաքանչյուր տեսաբան հիմնվել է սեփական հետազոտությունների վրա, և թարգմանությունը դիտարկվել է ուրույն տեսանկյունից: Ահա թե ինչու է տվյալ ոլորտն այդքան բազմազան:

2. Առակներն ու դարձվածքները վերլուծելիս պետք է գիտակցել, որ դրանք առանձնահատուկ դերակատարում ունեն լեզվական համակարգում, քանի որ արտացոլում են յուրաքանչյուր ազգին բնորոշ պատմամշակութային առանձնահատկությունները, այդ թվում՝ նյութական ու հոգևոր արժեքները: Հետևաբար, բազմաթիվ գիտնականներ հատուկ ուշադրություն են դարձրել առակներին ու դարձվածքներին:

3. Առակների ու դարձվածքների ուսումնասիրությունն նպաստում է բացահայտելու ազգային արժեքները: Օրինակ՝ այն կարող է մեծապես օգնել անգլերեն ուսումնասիրող պարսիկ ուսանողներին՝ էլ ավելի իրազեկ լինելու անգլերեն ու պարսկերեն ասույթների և դարձվածքների խորքային իմաստներին, հասկանալու, թե ինչպես կիրառել այդ գիտելիքներն ըստ անհրաժեշտության ու ինքնատիպ եղանակով:

4. Բանաստեղծական երկը թարգմանելիս պետք է հետևել որոշակի կանոնների. ստեղծագործության գաղափարն արտահայտելու համար ճշտել տաղաչափական սկզբունքներն ու հանգավորման եղանակները: Ամենաընդունելի մոտեցումը բանաստեղծական պատկերների ու գրական հնարքների, լեզվի ու հանգի վերլուծությունն է: Դրա շնորհիվ փաստարկներն ու պնդումներն ավելի ծանրակշիռ են դառնում: Չափաձոյում նկարագրված թեմայի հետ գործ ունենալիս անհրաժեշտ է հաշվի առնել այն ժամանակաշրջանը, երբ այն գրի է առնվել, և ձգտել ներկայացնել նկարագրված իրադարձությունները պատմական ժամանակաշրջանի լույսի ներքո:

5. Հարկավոր է համեմատել տվյալ եղինակի կողմից իրադարձությունների նկարագրությունը համանման վիճակների ներկայացմանը գրական այլ գործերում:

6. Անհրաժեշտ է բացահայտել հեղինակի վերաբերմունքը ենթադրյալ ընթերցողի հանդեպ. արդյոք նա օգնու՞մ է ընթերցողին, թե՞ խոչընդոտում:

1. **Թարգմանություն և թարգմանիչներ**, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Անանիա Շիրակացի համալսարանի հրատ., 2010, № 1 և № 2, էջ 398-400:
2. **Թարգմանություն. գործընթացը, ռազմավարությունը և մեթոդները**, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Անանիա Շիրակացի համալսարանի հրատ., 2011, № 3, էջ 323-325:
3. **Իդիոմատիկ /ոճային/ թարգմանության ակնարկ՝ հիմնված թարգմանիչների հեռանկարների վրա**, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Անանիա Շիրակացի համալսարանի հրատ., 2011, № 3, էջ 400-405:
4. **Որոշակի առաջընթաց քայլեր թարգմանության և թարգմանիչների համար**, «Գործնական լեզվաբանության և անգլիական գրականության միջազգային հանդես» (International Journal of Applied Linguistic and English Literature (IJALEL)), Ավստրալիա, 2012, № 4, էջ 242-246:
5. **Տարբեր առարկաների իմաստների դերը թարգմանության մեջ**, Գործնական լեզվաբանության և անգլիական գրականության միջազգային հանդես (International Journal of Applied Linguistic and English Literature (IJALEL)), Ավստրալիա, 2012, № 5, էջ 247-250:

**“Текст и проблемы личных комментариев переводчика  
в процессе перевода”**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук  
по специальности 10.01.04 - "Теория литературы"  
Защита состоится 25 декабря 2013 г. в 16 : 30 на заседании Специализированного Совета  
012 при ЕГУ по адресу: г. Ереван, ул. Абовяна 52/А, ЕГУ, филологический факультет,  
аудитория 202

**РЕЗЮМЕ**

Диссертация посвящена вопросам, лежащим в основе теории перевода, и характеристике качеств, которыми должен обладать хороший переводчик (фрилансер, и.т.д.). В работе проводится сравнение некоторых аспектов перевода из разных языков и культур (на примере переводов английских пословиц, поговорок и идиом на персидский язык), обсуждаются также проблемы переводческого подхода и мастерства (на примере переводов шекспировских сонетов на персидский язык), что предполагает надлежащее знание структуры косвенной речи, передачи фигур образной речи (гиперболы, иронии, литлты и т.д.) на языке оригинала. В диссертации исследуется первый и главный шаг для достижения мастерства в области перевода – чтение различных переводных текстов. Для эффективного перевода необходимы глубокие теоретические знания, и хорошие навыки должны быть приобретены еще до приступления к конкретной переводческой деятельности. Опытный переводчик должен превосходно владеть как языком оригинала, так и языком перевода, чтобы суметь понять и правильно передать жанровые различия, присутствующие в обоих языках.

**Диссертация** состоит из введения, трех глав и библиографии.

**Предметом** изучения данного труда является выявление проблем перевода английских идиом, пословиц, поговорок, и сонетов Шекспира на персидский язык, а также необходимость усовершенствования знаний языков оригинала и перевода.

**Целью** изучения является анализ литературных произведений на различных уровнях языка, чтобы выявить проблемы взаимосвязи грамматики и других аспектов в случае с сонетами и идиомами как в английском, так и в персидском языках. Для достижения цели исследования поставлены следующие задачи:

**1.** Анализ пословиц, поговорок и идиом, поскольку они играют особую роль в словарном запасе языка, отражая культурные особенности каждого народа, в том числе материальные и духовные.

**2.** Помочь иранцам, изучающим английский язык, поближе ознакомиться с английскими и персидскими идиомами, пословицами и поговорками с целью их дальнейшего использования.

**3.** При анализе поэм следует придерживаться определенных правил, а именно: начать с анализа поэтических фигур и литературных методов, языка и рифмы переводимого текста, что будет способствовать его правильному воспроизведению.

**4.** Сравнение описаний одинаковых событий в разных литературных произведениях одного и того же автора.



5. Выявить отношение автора к предполагаемому читателю: он их поддерживает или осуждает.

**Во введении** представлена общая характеристика темы, обоснованы ее актуальность и научная новизна. Показаны цели, задачи, а также методологическая основа исследования.

**В первой главе** говорится о том, что перевод создает точный и понятный аналог коммуникации переводимого языка на язык перевода. Иногда переводчик вынужден позволять себе некоторые вольности, чтобы воспроизвести колорит и стиль оригинала. Также обсуждаются идиомы, пословицы и поговорки. Читатель понимает, что идиомы – это готовые выражения, которые нельзя понимать буквально, поскольку они нерасчленимы и их смысл не вытекает из составляющих частей. Для понимания и правильной передачи смысла идиом прежде всего необходимо знание культуры народа, с языка которого делается перевод. Пословицы и поговорки – это мудрые высказывания, которые преподают ценные уроки. В них отражены культура и ментальность, национальные особенности народа-носителя каждого конкретного языка.

**Во второй главе** представлены история вопроса и его описание. В широком смысле, перевод – это создание на исходном языке (ИЯ) точной и понятной версии текста на языке оригинала (ЯО), в которой не теряются настроение и стиль оригинала. Во второй главе обсуждается также техника перевода поэзии, в которой необходимо сохранить стихотворную форму: рифму, образную речь, а также мелодику оригинала. Этого невозможно достичь без особого таланта и самосовершенствования. Некоторые переводы стихов настолько глубоки и близки к оригиналу, что впечатляют читателей, не знающих язык оригинала. Из-за сложностей, связанных с переводом поэзии, многие пришли к заключению, что переводчик стихов сам в какой-то мере должен быть поэтом. А иначе он не должен даже браться за перевод.

**В третьей главе** выявляются и обсуждаются вопросы формы и значения. Здесь говорится о функциях перевода, о ее полезной роли в развитии лингвистической науки. Прежде всего перевод является источником знаний о неизвестных культурах, позволяющим проникнуть в их глубь и приобщиться к ним. Таким образом, перевод – не просто лингвистический процесс. Он может оказать большое политическое, социальное влияние, как это было в случае различных стран, упомянутых в диссертации. Более того, перевод связывает народы мира, открывая двери к неизвестным культурам и языкам через межкультурную коммуникацию. В этой главе также представлены тенденции развития методики перевода и обучения переводу в мире.

**В заключении** обобщаются главные выводы исследования. В нем представлены основные результаты данной диссертации, которые являются базисными в данной работе.

По теме диссертации опубликовано пять статей.

**Mohammad Reza Hojat Shamaï**

**The Text and the Problems of the Translators Personal Comments in Translation**

**Dissertation to obtain the degree of Doctor of Philosophy in the field of  
Theory of Literature 10.01.04**

**Defense day: December 25, 2013, 16:30 pm at the VAK specialized Council 012 under the  
Yerevan State University.**

**Address: Yerevan 52/A Abovyan str., YSU, Faculty of Armenian Philology, room N 202**

**Summary**

This thesis is an overview of the main issues at the core of theorizing translation practice and the features of a good translator or how to become such and, of course, what skills are needed for becoming a freelance translator and translation process itself. It also tries to compare some aspects of translation in different languages and cultures (on the basis of Persian translation of English proverbs and idioms). We can also state another issue of this work such as the translator and the problems of translation mastership (on the basis of Persian translation of Shakespeare's sonnets) for which one must know the sentence structure in indirect speech and different figures of speech in the source language like hyperbole, irony, meiosis and also have thorough knowledge of these figures of speech which will further help in changing one's flaccid knowledge into active usage. This dissertation is intended to study the first and most important step in reading different translations of various texts. As an effective translating requires first-class knowledge, so approachable skills should be developed before performing any text conversion. An excellent translator must have a complete knowledge of both source and target speech, so that it'll be possible to understand the diverse genres in both source and target verbal communication. The thesis can be helpful in improving reading aptitude in general, and may give insights, which can be subconsciously useful.

The object of the study of the present thesis is to see the translators' problems while performing Persian translation of English proverbs, idioms or Shakespeare's sonnets and also consider the necessity of complete knowledge of both source and target languages.

The aim of the study is to analyze the literary works of different layers in both languages, to see the problems of interrelations between grammar and other aspects.

The main objectives for achieving the goal of the research are:

**1.** To analyze the proverbs and idioms which are regarded as special factors of a language's vocabulary because they reflect specific cultural characteristics of each nation, including material and spiritual values.

**2.** To help the Persian learner of English be more aware of English and Persian proverbs and idioms and of their usage in appropriate and interesting way.

**3.** To analyze a poem, we must follow some rules. The most applicable are the analysis of poetic figures and literary devices, language and rhyme which are used to make one's point and support his/her argument.

**4.** To compare the ways of describing particular events by a given author to the ones that were used for depicting same events in other literary pieces.

**5.** To know author's feelings about the supposed reader, that is, whether he supports, or condemns them.

**The thesis consists of** an introduction, three chapters, conclusion and bibliography

The **Introduction** defines the subject of the study and dwells upon the urgency, purposes, and problems of the research.

**Chapter I** deals with the concept of translation skills in turning a communication in one language into a correct and understandable one in another language. Sometimes a translator has to take certain liberties with the original text in order to recreate the mood and style of the original. Translation is not merely linguistic conversion or transformation between languages but it involves accommodation in scope of culture, politics, aesthetics, and many other factors. In the first chapter the author also talks about the proverbs and idioms; readers think that idioms are phrases and sentences that do not mean exactly what others say. Even if you know the meaning of every word in idiom, you may not understand it because you don't comprehend the culture behind it. Proverbs are wise sayings that help to teach. Proverbs and idioms are not only product of language but also an effective means in social communication.

**Chapter II** touches upon backgrounds and descriptions. Broadly speaking, translation turns a text of source language (SL) into a correct and understandable version of target language (TL) without losing the essence of the original. Here in the second chapter we can observe the translation of poetry into poetry which entails preserving of the rhyme, figurative language and the general tone of the original. This cannot be achieved unless the translator has a special talent and introspection. Some poetic translations are so deep and original that they impress readers in other languages. The difficulty of poetic translation leads many to think that the translator of poetry must himself be a poet otherwise he should not dare to square the circle.

**Chapter III** identifies and discusses form and meaning. In the last chapter of the thesis the author asserts that translation can perform different roles in constructing new words but it also has most crucial meaning as a source of knowledge about foreign, less familiar cultures. Thus, translation is not merely a linguistic process, but can also make a political and social impact. Moreover, in the world of globalization translation can act as a 'bridge'. Translation will allow us to open the doors to an unknown cultural and linguistic world. Translation of various books, newspapers, and magazines will also introduce a rich developing world in reference to methodology and education alike.

**Conclusion** summarizes the key outcomes of the research, represents the main concludes of the study which support the ideas of this work.